ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/56

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձը) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.05.2018թ. թիվ 03/26-3/9123-18 գրությամբ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00858578/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.05.2018թ. թիվ ԴՎԱ/1758 գրության հիման վրա, 22.05.2018թ. նախաձեռնել է «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.05.2018թ. թիվ ԴՎԱ/1758 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում պարզվեց, որ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշված չէր երաշխիքի ժամկետը, հրավերով պահանջվել է մինչև 10 լիտրանոց տարաներով, իսկ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել էր 50 լիտրանոց տարաներով, նշված չէր նաև համապատասխանության սերտիֆիկատի, ապրանքային նշանի, արտադրողի ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը:

02.05.2018թ. գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը և առաջարկել էր մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց շտկված տարբերակը, որտեղ կրկին առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես, տեխնիկական բնութագրում կրկին նշված չէր համապատասխանության սերտիֆիկատի մասին տեղեկությունը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները՝ որոշեց մերժել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի հայտը»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.05.2018թ. թիվ 03/26-3/9123-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Գայանե Այվազյանը և Անդրանիկ Մովսեսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.05.2018թ. թիվ 03/26-3/9123-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.05.2018թ. թիվ ԴՎԱ/1758 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.04.2018թ. նիստի թիվ 3, և 02.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ներկերի և լուծիչների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ից 12-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը

համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը):

Հանձնաժողովը 23.04.2018թ. նիստի N 3 արձանագրության 4.1 կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ 6-րդ, 7-րդ և 11-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 11-րդ չափաբաժիններով սահմանվել են ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագրերը.

- 6-րդ չափաբաժին՝ ապրանքի անվանումը՝ ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (Ներկ սպիտակ ՊՖ-115), տեխնիկական բնութագիրը՝ Արտադրվում է համաձայն ԳՕՍՏ 6465-76-ի: Տեսակը ՊՖ-115: Պարամետրերը և դրանց շեղումները համաձայն ԳՕՍՏ 6465-76-ի: Փաթեթավորումը՝ մինչև 10լ.-ոց տարաներով, պահպանման երաշխիքային ժամկետը 12 ամիս՝ արտադրման օրվանից: Մատակարարումը՝ արտադրման օրվանից ոչ ուշ քան մեկ ամիս: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ:
- 7-րդ չափաբաժին՝ ապրանքի անվանումը՝ ներկ-էմալ, գույնը՝ սև (Ներկ սև ՊՖ-115), տեխնիկական բնութագիրը՝ Արտադրվում է համաձայն ԳՕՍՏ 6465-76-ի: Տեսակը ՊՖ-115: Պարամետրերը և դրանց շեղումները համաձայն ԳՕՍՏ 6465-76-ի: Փաթեթավորումը՝ մինչև 10լ.-ոց տարաներով, պահպանման երաշխիքային ժամկետը 12 ամիս՝ արտադրման օրվանից: Մատակարարումը՝ արտադրման օրվանից ոչ ուշ քան մեկ ամիս:
- 11-րդ չափաբաժին՝ ապրանքի անվանումը՝ ներկ՝ սև, ՆՑ-132 (Ներկ սև ՆՑ-132), տեխնիկական բնութագիրը՝ Համաձայն ԳՕՍՏ 6631-74 պահանջների : Տեսակը ՆՑ-132: Ներկ սև գույնի նիտրո՝ հերմետիկ փակված մինչև 20լ-ոց տարայով: Նախատեսված մետաղական մակերեսների ներկման համար: Տարան պիտակավորված թղթե կամ օֆսեթ

տպագրությամբ: Պիտակին նշված օգտագործման եղանակը, արտադրող կազմակերպության տվյալները, արտադրման ժամկետը, քաշը: Պահպանման ժամկետը ոչ պակաս 12 ամիս՝ արտադրման օրվանից: Մատակարարումը՝ արտադրման օրվանից ոչ ուշ քան մեկ ամիս: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

02.05.2018թ. նիստի N 4 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է, մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշված չէ երաշխիքի ժամկետը, հրավերով պահանջվել է մինչև 10 լիտրանոց տարաներով, իսկ վերջինս առաջարկել է 50 լիտրանոց տարաներով, նշված չէ նաև համապատասխանության սերտիֆիկատի, ապրանքի ապրանքային նշանի, արտադրողի ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը:

Նույն օրը Հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ին՝ պահանջելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակն ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

11.05.2018թ. նիստի N 4 արձանագրությամբ (շարունակություն) Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց շտկված տարբերակը, որտեղ կրկին առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, տեխնիկական բնութագրում կրկին նշված չէ համապատասխանության սերտիֆիկատի մասին տեղեկությունը և հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները՝ Հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Հանձնաժողովի 02.05.2018թ. ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության կողմից կատարվել են համապատասխան շտկումները, այդ թվում, ներկայացվել են նաև Հանձնաժողովի կողմից պահանջվող ապրանքների համապատասխանության սերտիֆիկատները: Սակայն, Հանձնաժողովի քարտուղարը Ընկերության ներկայացուցչի հետ հեռախոսազրույցի ժամանակ վերջինիս հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից ենթակա է գնահատման բացառապես Հավելված 6.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեղեկատվությունը, ուստի և Ընկերության կողմից առանձին փաստաթղթով ներկայացված համապատասխանության սերտիֆիկատները Հանձնաժողովի կողմից չեն գնահատվել, ինչի արդյունքում 11.05.2018թ. նիստի N 4 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված տարբերակի տեխնիկական բնութագրում կրկին նշված չէ համապատասխանության սերտիֆիկատի մասին պահանջվող տեղեկությունը:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներակայացրեց իր կողմից առաջարկվող ապրանքների պետական գրանցման վկայականները՝ ռուսերենով (N RU.77. 01.34.015.E0010077.05.16, առ 13.05.2016թ., NRU. 77.01.34.015.E0010076.05.16, առ 13.05.2016թ., NRU.77.01.34.008.E002232.09.16, առ 29.09.2016թ., NRU.77. 01.34.008.E001098.05.16, առ 16.05.2016թ.,) որոնք հավաստում են տվյալ ապրանքի համապատասխանությունը Եվրասիական տնտեսական միության միասնական սանիտարահամաճարագաբանական և հիգիենիկ հսկողության պահանջներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ (...)պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման

փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի

նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի 7.17 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում նույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխա¬տանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

• 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի (այսուհետ՝ նաև Հրավերի օրինակելի ձև) N6.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, նախատեսված են

հետևյալ վավերապայմանները՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակում առկա են Հրավերի օրինակելի ձևով նախատեսված պարտադիր վավերապայմանները՝ (ապրանքի անվանումը՝ 6. ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (ներկ սպիտակ ՊՖ-115), 7.ներկ-էմալ, գույնը՝ սև (ներկ սև ՊՖ-115), 11.ներկ՝ սև, ՆՑ 132 (ներկ սև ՆՑ-132), ապրանքային նշանը՝ «Մաստեր», արտադրողի անվանումը «Մերկուրի» ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՌԴ և տեխնիկական բնութագիրը՝ համաձայն ԳՕՍՏ 6465-76, ԳՕՍՏ 6631-74):

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից Հանձնաժողովին են ներկայացվել առաջարկվող ապրանքների համապատասխանության սերտիֆիկատները:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ համապատասխանության սերտիֆիկատը ենթակա է ներկայացման պայմանագրի կատարման փուլում, եթե այն կիրառելի է տվյալ ապրանքի համար, և առաջարկվող ապրանքի համապատասխանության սերտիֆիկատը չի հանդիսանում Հրավերի 6.1 հավելվածի օրինակելի ձևով նախատեսված պարտադիր վավերապայման, հետևաբար, Հանձնաժողովը՝ նշված հավելվածում ապրանքի համապատասխանության սերտիֆիկատի վերաբերյալ տեղեկության բացակայության հիմքով «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.05.2018թ. թիվ 03/26-3/9123-18 գրությամբ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00858578/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ